# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 239 (24520), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۲۰) ۲۳۹ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԵՔՇԱԲԹԻ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

سه شنبه – ۳۰ آبان ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ՄԻԱՒՈՐԵԼ ՋԱՆՔԵՐԸ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## Նախագահ Ռէյիսիի նամակը՝ 50 երկրների ղեկավարներին



«ԱԼԻՔ» - Հանրապետութեան նախագահ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէյիսին նամակ է գրել 50 երկրների ղեկավարներին, կոչ անելով միաւորել ջանքերը՝ Գազայի պաշարումը եւ սիոնիստական ռեժիմի յանցագործութիւնները դադարեցնելու համար:

Այաթ. Ռէյիսին քննադատել է Գազայի հատուածում տեղի ունեցող ողբերգական զարգացումների վերաբերեալ Արեւմուտքի կիրառած երկակի ստանդարտներն ու լռութիւնը:

Նախագահը կոչ է արել անկախ երկրներին օգտագործել բոլոր հնարաւոր միջոցները՝ ներառեալ Իսրայէլի հետ համագործակցութեան դադարեցումը եւ առեւտրային ու քաղաքական կապերի խզումը՝ Գազայի հատուածում յանցագործութիւնները դադարեցնելու համար:

## Իրանը հայց կը ներկայացնի Իսրայէլի դէմ



«ԱԼԻՔ» - Իրանը մտադիր է Միջազգային քրէական դատարան սիոնիստական ռեժիմի դէմ հայց ներկայացնել՝ Գազայի հատուածում գործողութիւնների եւ ռազմական յանցագործութիւնների համար: Այս մասին յայտարարել է ԱԳ նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին:

«Բազմաթիւ իրաւական փորձագէտների եւ միջազգային փորձագէտների կարծիքով՝ սիոնիստական ռեժիմը ռազմական յանցագործութիւններ է կատարել Գազայում: Բաւական ապացոյցներ կան: Իսլամական համագործակցութեան կազմակերպութեանն ուղղուած իր առաջարկի շրջանակում Իրանը կոչ է արել նշանակել յանձնաժողով, որը կը մշակի այս փաստաթղթերը Միջազգային քրէական դատարանին ներկայացնելու համար:

Մենք յուսով ենք, որ Միջազգային քրէական դատարանը կապացուցի, որ նա գործում է անաչառ ու արդարացի, եւ միջոցներ կը ձեռնարկի ռազմական յանցագործներին դատարանի առաջ կանգնեցնելու համար»,- ասել է ԱԳՆ մամլոյ խօսնակը:

Քանանին յիշեցրել է, որ ԱԳ նախարար Հուսէյն Ամիր Աբդոլլահեանը վերջերս Ժնեւ կատարած այցի ժամանակ ՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպմանը բարձրացրել է այդ հարցը:

ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչը հաւաստիացրել է, որ Իրանն ուշադիր հետեւելու է այդ հարցին:

## Ադրբեջանը տապալել է Ստեփանակերտի խաչը






Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը գրում է.

«2023 թւականի սեպտեմբերեան ռազմական ագրեսիւ գործողութիւններից եւ Արցախի տոտալ հայաթափման գործողութիւններից յետոյ Ադրբեջանը շարունակում է ոչնչացնել հայկական մշակութային արժէքները՝ էթնիկ պատկանելիութեան հիմքով: Այս ամենի ապացոյցը Ստեփանակերտի մերձակայքում՝ Դաշուշէն գիւղի մօտակայքում գտնուող բլուրներից մէկի վրայ գտնուող 50 մետրանոց լուսատու խաչի տապալումն էր, որը ոչ միայն հարուած էր մշակութային արժէքին, այլեւ քրիստոնեայ ողջ հայ հանրոյթին: Ընկած խաչի տեսանիւթը առաջինը հրապարակել է ուկրաինական Strana.ua հրատարակութեան Telegram ալիքը:

Տեսահոլովակը նկարահանուել է 2023 թւականի սեպտեմբերի 29-ին, որտեղ երեւում է, որ խաչն ընկած է գետնին:

Խաչը տեղադրուել էր 2017 թւականի մայիսի 9-ին՝ ի յիշատակ Արցախի ազատագրման եւ պաշտպանութեան համար զոհուած զինծառայողների: Այն իր բարձրութեամբ երկրորդն էր եւրոպական տարածաշրջանում, տեսանելի էր Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի բոլոր կողմերից, լուսաւորուած էր յատուկ լոյսերով, որոնք այն տեսանելի էին դարձնում նաեւ գիշերը»:

Մարութ Վանեան.

## «Հետաքրքիր է՝ սա արդէն իրականութի՞ւն է, թէ՞ ադրբեջանցիներն արդէն իրականացրել են»





Ադրբեջանական սոցկայքերում քննարկւում է Արցախի խորհրդանիշներից մէկի՝ «Մենք ենք՝ մեր սարերը» կամ «Պապիկ-տատիկ»-ի արձանը երկաթեայ բռունցքով փոխարինելու հարցը: Արցախցի լրագրող Մարութ Վանեանը թւիթերի իր էջում տեղադրելով երկու տարբերակները՝ գրել է. «Հետաքրքիր է՝ սա արդէն իրականութի՞ւն է, թէ՞ ադրբեջանցիներն արդէն իրականացրել են:

Մենք տեղահանուել ենք մեր տներից, ասենք՝ «լաւ է», բայց ինչո՞ւ տեղափոխել այս ծեր «Պապիկ-տատիկ»-ին, երբ նրանք այնտեղ են 60-ականներից»:

**24News**

Irdiplomacy.

## Բարձր է Մերձաւոր Արեւելքում աւելի մեծ լարում մտցնելու սցենարի հաւանականութիւնը

«ԱԼԻՔ» - Երկուշաբթի՝ նոյեմբերի 20-ին, Բաքւում վայրէջք է կատարել իսրայէլական զէնքի հերթական խմբաքանակը տեղափոխող ինքնաթիռը:







Տարբեր աղբիւրների վկայութեամբ, նոյեմբեր ամսւայ ընթացքում սա Իսրայէլից զէնք տեղափոխող հինգերորդ գրանցուած չուերթն է:

Իրանական փորձագիտական շրջանակների կարծիքով՝ Բաքուն շարունակում է իր հասարակութեանը նախապատրաստել պատերազմի համար: «Երեւանը պէտք է զգուշանայ, որ իր «Խաղաղութեան խաչմերուկ»-ում

(Շար. 8-րդ էջում)



«Զա՛րկ երբ հալածում են քեզ, զա՛րկ երբ փակում են քո փառաւոր ընթացքը, զա՛րկ շարունակ: Եւ այն ժամանակ հաւատա՛, նախատակ ժողովուրդ, որ արիւնարբու թշնամիդ անգամ ծունկ կը չոքի ու կը կոչի՝ յարգա՛նք քեզ»:

Աւետիս Ահարոնեան (1866-1948), Դաշնակցական ճանաչած գործիչ, հայ մեծանուն գրող, ով 1920 թւականին Հայաստանի Հանրապետութեան անունից ստորագրեց Սեւրի դաշնագիրը


ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# «Հաւատով խոստովանիմ»-ը ընթերցուել է 24 լեզուներով

## Միջեկեղեցական աղօթք Նիւ Եորքում՝ Արամ Ա կաթողիկոսի նախագահութեամբ

Ամերիկայի Միացեալ Նահանգների Արեւելեան հայոց թեմի կատարած այցելութեան առիթով եւ նկատի ունենալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսին մասնակցութիւնը միջեկեղեցական շարժմանը եւ ունեցած լայն կապերը, ազգային առաջնորդարանը միջեկեղեցական աղօթքի արարողութիւն է կազմակերպել Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցու մէջ: Վեհափառ Հայրապետի կողքին արարողութեանը մասնակցել են Ամերիկայի Արեւելեան հայոց թեմի առաջնորդ Տ. Անուշաւան արք. Դանիէլեանը եւ Արեւմտեան հայոց թեմի առաջնորդ Տ. Թորգոմ եպս. Տօնոյեանը:



Ինչպէս տեղեկացնում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնից, միջեկեղեցական աղօթքի մաս են կազմել նաեւ Նիւ Եորքի բոլոր օտար եկեղեցիների ներկայացուցիչները:

«Հաւատացեալներու ներկայութեան տեղի ունեցած եկեղեցական այս արարողութիւնը խոր տպաւորութիւն թողուց ներկաներուն եւ առցանց հետեւողներուն վրայ: Եզակի երեւոյթ էր յատկապէս Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին «Հաւատով խոստովանիմ» աղօթքի 24 տուներուն ընթերցումը 24 լեզուներով՝ ներկաներուն կողմէ:

Միջեկեղեցական աղօթքի աւարտին, առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով՝ հրաւիրեց Վեհափառ Հայրապետը իր պատգամը փոխանցելու: Նորին Սրբութիւնը անդրադարձաւ միութեան ըմբռնումին ու հրամայականին, ինչպէս նաեւ միութեան գործնական արտայայտութիւն տալու միջոցներուն: Ան յատկապէս շեշտեց, որ ներկայ աշխարհին մէջ, երբ քրիստոնեայ հաւատքը վտանգուած է, անհրաժեշտ է մէկ կողմ թողուլ անցեալէն ժառանգուած դաւանական հարցերը եւ միջեկեղեցական գործակցութեան ճամբով հասարակաց կեցուածքներ որդեգրել քրիստոնէական հաւատքը վտանգող շարժումներուն նկատմամբ:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն»,- ասւում է հաղորդագրութեան մէջ:

# Հայկական նոր նորմալութիւնը եւ իր վտանգները. Ուրախանալ արգելւում է տխրել

**ՎԱՀԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**
**«Այլընտրանքային նախագծեր» խմբի համահիմնադիր**

Պարտադրուող ուրախութիւնը, պարտադրուող տօնը զանգուածային բռնութեան ձեւերից մէկն է՝ տոտալիտարայլասերուած գէշ ռեժիմներին բնորոշ: Երեւանի ինտենսիւ ամանորացմանը զուգահեռ՝ Արցախի մեր քոյրերն ու եղբայրներն առ այսօր ամէն օր թաղում, հոգեհանգիստ, եօթ-քառասունքի մէջ են, ամէն օր ԴՆԹ-ի նոր հաստատում է գալիս ու նոր ողբերգութիւն:

Մենք նոյնիսկ չենք հասցնում հասկանալ, թէ ինչ ենք կորցրել, ինչ է լինելու, ոնց է լինելու: Էս պայմաններում տօն ենք անում:

Նման բան համակենտրոնացման ճամբարներում էր լինում:

Երկրիդ վարչապետն ասում է՝ Ադրբեջանի բարձրագոյն իշխանութիւնը Հայաստանը որպէս «արեւմրտեան Ադրբեջան» է ձեւակերպում, ու դրա հետ մէկտեղ զանգւածներին պարտադրում են ուրախանալ:

Երբեմն տպաւորութիւն է, որ Հայաստանում էուլիւցիան հակառակ ուղղութեամբ է գնում. մենք մարդուց վերածւում ենք անասունի:

Ի՞նչ են մտածում Նիկոլի նկարի տակ աշխատող համակարգերը, թիմերը, ձայները կտրած կրթւած շերտերը, որոնք իրենց խիղճն ու ուղեղը գրաւադրել են Նիկոլի մօտ: Իրօք ախր ամօթ է: Մենք Բաքւի բանտերում մարդիկ ունենք, բազմաթիւ գերիներ: Իշխանութիւնն իր բոլոր խողովակներով, մեղիամանիպուլիատիւ համակարգով անընդհատ համոզում է, որ սա նորմալ է: Իրականում հայ ժողովուրդն ուրախ չէ: Նա չի էլ հասցրել հասկանալ, թէ ինչ է զգում: Չի հասցրել մարսել իր հետ կատարւածը: Նրան պարտադրում են ուրախութիւն:

Իշխանութիւնը բոլոր ողբերգութիւններից յետոյ փորձում է ստեղծել «նոր նորմալութիւն». պատերազմ՝ նորմալ է, պարտութիւն՝ նորմալ է, հազարաւոր զոհեր՝ նորմալ է, շրջափակում՝ նորմալ է, Արցախի կորուստ՝ նորմալ է:

Հայ հասարակութեանը 3-4 տարի է՝ ստիպում են ապրել անասնական պայմաններում՝ մարդուն ոչ բնորոշ մթնոլորտում: Սրա հանգուցալուծումը կարող է անկանխատեսելի լինել: 2020-ից յետոյ անձայրածիր ողբերգութեան ժամանակ Եկեղեցին եւ նրա բազմաթիւ սպասաւորներ իրենց վրայ վերցրեցին պետական եւ հասարակական տարբեր ինստիտուտների դերը՝ մեղմելու համար վիշտը, տալու յոյսի եւ վերապրելու ուժ: Նոյնն ինքնաբուխ արեցին հասարակական



տարբեր խմբեր եւ անհատներ՝ դառնալով ինքնաօգնութեան խմբեր, որոնք նորից ակտիւացան արցախեան նոր ողբերգութեան շրջանում: Եթէ ինչ-որ առողջ բան դեռ մեր հասարակութեան մէջ պահպանել է, ապա գուցէ նաեւ դրա շնորհիւ: Բայց սրանք ժամանակաւոր, մեխանիկական սպեղանիներ են:

Հիմա ժամանակն է, որ հանրային համակարգերը (ներառեալ՝ քաղաքական) սկսեն առողջ երկխօսութիւն սեփական ժողովրդի հետ՝ վերականգնելու մարդկային հասարակութեան որակները, առաջին հերթին՝ ապրումակցումն ու արժանապատւութիւնը: Գուցէ պետական մեքենայով հնարաւոր է պարտադրել հասարակութեանը «վիզուալ ուրախութիւն», բայց վախենալ է պէտք այն միտումից, որ հասարակութիւնը աղէտի չափից արդէն դադարել է զգալ որեւէ բան: Այս սա իրօք վախենալու է:

# Արցախի թեմի առաջնորդը նշանակուել է Մայր Աթոռի Արցախի հոգեւոր ժառանգութեան հարցերով գրասենեակի տնօրէն



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի Հայրապետական տնօրինութեամբ կատարուել են եկեղեցականների նոր նշանակումներ: Այս մասին յայտնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը նշանակուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի տնօրէն, իսկ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումեանը՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի վարիչ:

Տ. Սահակ վարդապետ Շաքարեանը ծառայութեան է կոչւել Սիւնեաց թեմում առաջնորդական տեղապահի իշխանութեան ներքոյ:

**24News**

# Ալիեւին յաջողուել է Արցախի դէմ ագրեսիան օրինակելի նախադէպ անուանել



Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Արցախի դէմ ագրեսիան ներկայացրել է որպէս յաջողուած օրինակ, թէ ինչպէս կարելի է ռազմական գործողութիւն իրականացնել՝ խաղաղ բնակչութեան շրջանում զրոյական զոհերով:

Նոյեմբերի 20-ին Բաքւում Իրաքի նախագահ Աբդել Լատիֆ Ջամալ Ռաշիդի հետ մամուլի համար յայտարարութեան մէջ Ալիեւն ասել է, որ երեք տարի շարունակ Հայաստանի հետ անմիջական շփումների միջոցով, միջազգային միջնորդների միջոցով ինքը փորձել է հասկացնել, որ «մենք չենք կարող թոյլ տալ ապօրինի անջատողական ռեժիմի գոյութիւնը նոյնիսկ Ադրբեջանի մի փոքր հատուածում»: «Բայց, ցաւօք, Հայաստանի կառավարութիւնը մեզ չլսեց: Նա լսեց իր խորհրդականներին Արեւմուտքում, բայց նրանք լաւ խորհուրդներ չտուեցին: Ցաւօք, նրանց խորհուրդն էր՝ որքան հնարաւոր է երկար պահել զօրախումբը մեր տարածքում:

Այս տարուայ սեպտեմբերին մեր համբերութեան վերջը եկաւ, եւ մենք հակաահաբեկչական գործողութիւն իրականացրեցինք մեր ինքնիշխան տարածքում՝ միջազգային իրաւունքին լիովին համապատասխան: Գործողութիւնը տեւել է 24 ժամից էլ քիչ, եւ քաղաքացիական բնակչութեան շրջանում զոհեր չեն եղել: Կարծում եմ, այն ֆոնին, ինչ տեղի է ունենում այժմ Մերձաւոր Արեւելքում, սա պէտք է դառնայ օրինակ, թէ ինչպէս կարելի է ռազմական գործողութիւն իրականացնել՝ խաղաղ բնակչութեան շրջանում զրոյական զոհերով»,- ասել է Ալիեւը:

Ակնյայտ է, որ Ադրբեջանի նախագահի համար տասնեակ խաղաղ բնակիչների, այդ թւում՝ երեք երեխաների մահը «զրոյական ցուցանիշ է»: Բայց նոյնիսկ եթէ Ալիեւի՝ երեխաների մահը թաքցնելու փորձերը յաջողութեամբ պսակւեն, ոչ մի կերպ չի լինի թաքցնել տարածաշրջանի աւելի քան հարիւր հազար բնիկ բնակիչների գաղթը:

**News.am**

# Բաքուն յայտարարում է «Զանգեզուրի միջանցք»-ում անցակէտեր տեղադրելու մտադրութեան մասին




Ադրբեջանը կրկին շրջանառում է «Զանգեզուրի միջանցք» նախագիծը եւ նախատեսում է Աղբանդում անցակէտ կառուցել:

Այս մտադրութեան մասին յայտնել է Ադրբեջանի պետական մաքսային կոմիտէի նախագահ Շահին Բաղիրովը:

««Զանգեզուրի միջանցք»-ում աշխատանքներ են տարւում՝ ներառեալ անցակէտերի մշակումը: Նախագծային աշխատանքների աւարտից յետոյ, կը սկսւի շինարարական գործընթացը»,- ասել է Շահին Բաղիրովը:

Խօսքը Զանգելանի շրջանի Աղբանդում անցակէտի կառուցման մասին է:

Աւելի վաղ Աղբանդի տարածքում սկսւել էր կամրջի շինարարութիւնը, որը Նախիջեւանն ու Ադրբեջանը կը կապի իրար Իրանի տարածքով:

**Yerkir. am**

# Բաքւից եւ Սումգայիթից եւս 25 ընտանիք է տեղափոխուել Աղաւնօ



Բաքւից եւ Սումգայիթից եւս 25 ընտանիք՝ 91 մարդ, այսօր տեղափոխւել է Լաչինի շրջանի Աղաւնօ գիւղ, հաղորդում է Ադրբեջանի փախստականների եւ ներքին տեղահանւածների հարցերով պետական կոմիտէն:

Աղաւնոյում այսպիսով մշտական բնակութիւն հաստատածների թիւը հասել է 382 հոգու՝ 96 ընտանիք:

Յիշեցնենք, որ Աղաւնօն առանց կրակոցի յանձնւեց թշնամուն 2022 թ. օգոստոսին: Բնակիչներին 19 օր առաջ զգուշացրել էին, որ մինչեւ օգոստոսի 25-ը պէտք է լքեն գիւղը, հայաթափումից յետոյ ադրբեջանական կողմը յայտարարեց գիւղը վերաբնակեցնելու մասին:

**Yerkir.am**



## Բենիամին Մատթէոսեան.
# «Ինչո՞ւ Մոսկուան կարելի է ռմբակոծել, Երեւանը՝ ո՞չ. մեզ թնդանօթի միս է դարձնում Ռուսաստանի եւ Իրանի դէմ պատերազմում Փաշինեանի իշխանութիւնը»

*Հայաստանի այս իշխանութիւնը շատ վաղուց է փոխել մեր երկրի արտաքին քաղաքական վեկտորը. փոխել է առնուազն այն պահից, երբ ստեղծուեց արեւմտեան հարթակ կոչուածը, որի նպատակի մասին օրերս յայտարարուեց ԱՄՆ Կոնգրեսում:*

*Կոնգրեսում շատ պարզ ասացին, որ ԱՄՆ-ի նպատակն է Հարաւային Կովկասից հեռացնել Ռուսաստանին, տարածաշրջանային կոմունիկացիաներն էլ այնպէս ապաշրջափակել, որ Իրանը հնարաւորութիւն չունենայ դրանից օգտուել:*

*168 TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում, խօսելով պատերազմից հինգ պակաս երկրում արտաքին քաղաքական վեկտորի փոփոխութեան գնացող ՀՀ իշխանութեան որդեգրած քաղաքականութեան մասին, նման տեսակէտ յայտնեց քաղաքագէտ Բենիամին Մատթէոսեանը՝ ընդգծելով.*

*«Դուք այսքան ժամանակ մի լուրջ եւրոպական կառոյցից կամ ՆԱՏՕ-ական պաշտօնեայից լսե՞լ էք արդեօք, որ պատրաստ են Հայաստանի եւրաինտեգրման կամ ՆԱՏՕ անդամ դարձնելու գործընթաց սկսել: Չկայ նման որեւէ առաջարկ: ԱՄՆ-ի նպատակը հետեւեալն է՝ Հարաւային Կովկասում ստեղծել ռազմաքաղաքական ժամանակաւոր միաւոր՝ Թուրքիայի, Ադրբեջանի եւ Հայաստանի մասնակցութեամբ: Երբ ԱՄՆ Պետդեպ-ի օգնականը խօսում էր այն մասին, որ իրենք սպասում են, թէ երբ է ստորագրուելու Խաղաղութեան պայմանագիրը, հէնց այդ միութեանը Հայաստանին միանալու մասին են ակնարկում: Իրենք բացայայտ ասում են՝ Հայաստանին եւ Ադրբեջանին դիտարկում են ընդամէնը որպէս բութ գործիք՝ Իրանի դէմ գործողութիւններ սկսելու համար»,- ասաց Բենիամին Մատթէոսեանը:*

*Քաղաքագէտն ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի կողմից արւող, իբրեւ թէ, հայանըպաստ յայտարարութիւնները համարում է ընդամէնը ծխածածկոյթ՝ Հայաստանի ինտեգրումը Թուրքիային արեւմտեան շղարշով պատելու համար:*

*«Հայաստանի իշխանութիւնն ընտրել է դէպի Թուրքիա ճանապարհը: Իրենց նպատակն է՝ ինտեգրուել թուրքական աշխարհին: Թուրքական Հայաստանի դէպքում է, որ Հայաստանի այս իշխանութիւնն ունի ապագայ. այս մարդիկ քաղաքական ապագայ չունեն, եթէ Ռուսաստանն է մնում որպէս Հայաստանի դաշնակիցը: Այն ճանապարհը, որով այս իշխանութիւնը գնում է, յանգեցնելու է Հայաստանի լուծարման, որովհետեւ, երբ Հայաստանը միանայ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ այդ ժամանակաւոր ռազմաքաղաքական դաշինքին, պէտք է նախ դուրս գայ ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից, իսկ նման քայլի գնալուց յետոյ թուրք-ադրբեջանական տանդեմին ոչինչ չի խանգարելու, որ ռազմական ճանապարհով լուծեն Հայաստանի հարցը: Այս երկու պետութիւնները մտածում են՝ չկայ Հայաստան, ապագայում չի լինի նաեւ հայցոր կողմ՝ գործընթաց սկսելու համար: Հայաստանի իշխանութեան կողմից տարւող գործընթացները հէնց այս տրամաբանութեամբ են գնում, որից յետոյ այս քաղաքական թիմը, եթէ հասցնի ճողոպրել, կունենայ անձնական ինչ-որ ապագայ: Եթէ Մարտի 1-ին կարելի էր անել այնպէս, որ զոհեր լինէին, ու ճողոպրել, ինչո՞ւ հիմա նա չի կարող ճողոպրել՝ աւելի մեծ մասշտաբով»,- ասաց Մատթէոսեանը:*

*Քաղաքագէտն ընդգծեց՝ Փաշինեանը պատմական փայլուն հնարաւորութիւններ է տուել՝ ինչպէս Ադրբեջանին եւ Թուրքիային, այնպէս էլ՝ Եւրոմիութեանն ու հաւաքական Արեւմուտքին, ուստի պատահական չէ, որ Փաշինեանի իշխանութիւնը նրանք ամէն գնով պահպանում են՝ մի դէպքում՝ դատապարտելով Հայաստանի Գլխաւոր Շտաբի յայտարարութիւնը՝ Փաշինեանի հեռացման պահանջով, միւս դէպքում՝ խոստանում Հայաստանի ներսում անկայունութիւն թոյլ չտալ, ինչպէս յայտարարեց օրերս Եւրոմիութեան արտաքին յարաբերութիւնների եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզէպ Բորէլը:*



## Արմէն Մանուէլեան.
# «Ալիեւի 60 հազարանոց բանակը կը ներխուժի Հայաստան. Արեւմուտքից օգնութիւն չստանալով՝ Փաշինեանը վազելու է ռուսների դուռը»

*Ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ Եւրոմիութեան որեւէ այլ երկրի զինուոր Հայաստան չի՛ գալու, քանի որ այդ երկրների համար Հայաստանը ռազմավարական մակարդակի կարեւորութիւն չունի. այդ երկրները Հայաստանին օգնելու մասին կը խօսեն, Հայաստանի հետ կը լինեն այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանն ունի Ռուսաստանին՝ որպէս դաշնակից, այդ դաշնակցին չէզոքացնելուց յետոյ նրանք կը հեռանան Հայաստանից՝ տեղում թողնելով դատարկութիւն, որն անմիջապէս կը լցնի Թուրքիան՝ իր ռազմական ներկայութեամբ:*

*168 TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում, խօսելով Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բրիւսէլի, Գերմանիայի եւ այլ երկրների հետաքրքրութեան, Հայաստանին աջակցելուն միտուած յայտարարութիւնների մասին, նման տեսակէտ յայտնեց միջազգայնագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու, «ՀայաՔէէ» նախաձեռնութեան անդամ Արմէն Մանուէլեանը՝ շեշտելով.*

*«Հայաստանն այդ երկրներին չի հետաքրքրի այն պահից սկսած, երբ Ռուսաստանը դուրս կը գայ այստեղից, ինչից յետոյ այդ երկրները որեւէ ռեսուրս չեն ուղղի Հայաստանի համար»,- ասաց Մանուէլեանը:*

*Պատմական գիտութիւնների թեկնածուն միեւնոյն ժամանակ նշեց, որ թէեւ Արեւմուտքից կան ահռելի խոստումներ, գետնի վրայ Փաշինեանը չունի իրական ռեսուրս արտաքին քաղաքականութեան մէջ վեկտորի փոփոխութիւն անելու համար, ինչը շատ լաւ գիտի Ռուսաստանը:*

*Նրա խօսքով՝ Փաշինեանի պէս կամազուրկը ձեռնտու ղեկավար է Պուտինի համար, որը զբաղուած է ուկրաինական ճակատով եւ չի ցանկանում Հարաւային Կովկասում յաւելեալ գլխացաւանքի մէջ ընկնել:*

*«Ռուսաստանում շատ լաւ գիտեն, որ Հայաստանի այս ռեժիմը, վաղ թէ ուշ, խնդիրների մէջ է յայտնուելու թուրք-ադրբեջանական տանդեմի պատճառով եւ, չստանալով Արեւմուտքից որեւէ օգնութիւն, գալու են ռուսների դուռը, ուստի ռուսները շտապելու որեւէ բան չունեն, յատկապէս որ իրենց համար ձեռնտու է Հայաստանի իշխանութեան անատամութիւնը: Կարծում եմ՝ ուկրաինական ճակատում աւարտելուց յետոյ Հայաստանի այս ռեժիմը դժուար երկար մնայ»,- ասաց Մանուէլեանը՝ Արցախը յանձնելուց յետոյ Ադրբեջանի համար յաջորդ ռազմական գործողութիւնների վայր համարելով Հայաստանի սահմանը:*

*«Ալիեւի 60 հազարանոց բանակը կը ներխուժի Հայաստան. քանի դեռ կար Արցախը, այդ բանակի ռեսուրսներն ուղղւում էին Արցախի դէմ, իսկ հիմա՝ Հայաստանի»,- ասաց Մանուէլեանը:*

**168.am**

# Հայաստանը սիրում է ականջներով, իսկ ինչո՞վ է մտածում



*Հայ-ադրբեջանական բանակցութիւնների ներկայիս փուլն առաւել բաց է դարձրել այն գէոպոլիտիկ խաղը, որի մէջ ներքաշուեց Հայաստանը Փաշինեանի աւանտիւրիստ ձեռամբ: Թէ՛ գործընթացի բուն կողմերը, թէ՛ տարածաշրջանային եւ գլոբալ շահագրգիռ խաղացողները յստակ բացայայտել են իրենց «կարմիր գծերը» կոնֆլիկտի հնարաւոր փաստաթղթային հանգուցալուծման եզրափակիչ փուլում:*

*Մերֆիի հանրայայտ օրէնքներից մէկն ասում է, որ, որպէս կանոն, ժամանակի 20%-ը ծախսւում է խնդրի 80%-ը լուծելու համար, իսկ ժամանակի մնացած 80%-ը գնում է խնդրի վերջին 20%-ի կարգաւորման համար:*

*Գրեթէ բառացի նոյն վիճակն է հայ-ադրբեջանական տրեկի վրայ. Փաշինեանը յայտարարում է, որ պատրաստ է պայմանագրի 70%-ը, եւ վերջին 30%-ի վրայ շահագրգիռ կողմերը սկսել են ծախսել աւելի շատ ժամանակ:*

*Փորձենք համառօտագրել խնդրով զբաղւող կողմերի դիրքերը տուեալ պահին.*

*1. Հայաստանը, իսկ աւելի ճիշտ՝ այն ներկայացնող Նիկոլ Փաշինեանը, զիջելով գրեթէ բոլոր ազգային շահերի տիրոյթում՝ Արցախի կորուստ, ադրբեջանական ագրեսիա, անկլաւներ եւ այլն, կենտրոնացել է 29.800 քկմ.-ի եւ Ռուսաստանին դուրս մղելու գերխնդիրը լուծելու վրայ: Նիկոլին խաղաղութեան պայմանագիրը պէտք է ցանկացած գնով, սակայն ոչ թէ բուն խաղաղութեան, այլ իր առջեւ դրուած խնդիրը լուծելու (Ռուսաստանի մասով) եւ սեփական իշխանութիւնն ամրապնդելու համար:*

*2. Ադրբեջանը բացարձակապէս շահագրգիռ չէ ինչ-որ թղթի կտոր ստորագրելու մէջ: Ալիեւն առանց այդ էլ ստացել կամ ստանում է իր ուզածը կոմբինացուած ճնշումների միջոցով եւ կարող է իրեն թոյլ տալ շռայլ՝ գէոպոլիտիկ շոուներ բեմադրել՝ չգնալով արեւմտեան բանակցային հարթակներ, հաճոյանալով Ռուսաստանին, իսկ իրականում հետապնդելով բացառապէս սեփական շահը:*

*3. Ադրբեջանը դժգոհ է արեւմըտեան՝ անգամ ֆորմալ յայտարարութիւններից, ի աջակցութիւն Հայաստանի եւ Արցախի դէմ իրականացուած էթնիկ զտումների «հումանիտար հետեւանքների» յիշատակումներից եւ պահանջում է Արեւմուտքից դադարեցնել թէկուզ զուտ ձեւական մանեւրները: Արեւմուտքը դա անել չի կարող, որովհետեւ հէնց նման, ոչ մի ռէալ ազդեցութիւն չունեցող, բայց հայերիս ականջի համար հաճելի յայտարարութիւններն են Ռուսաստանը Հայաստանից դուրս մղելու օպերացիայի հիմնական զէնքը: Հայաստանը, ինչպէս կինը, սիրում է ականջներով…*

*4. Սա է պատճառը, որ ԱՄՆ Պետդեպ-ն իր վերջին արձագանքի մէջ խրախուսում է գոնէ եռկողմ ձեւաչափով եզրափակել բանակցութիւնները: Այս առաջարկը բխում է հէնց նրանց շահերից, որովհետեւ իրենց հետաքրքրող հիմնական թեման՝ Ռուսաստանի դէմ պայքարը, Նիկոլը երաշխաւորել է:*

*Արդեօք եռկողմ ձեւաչափը ձեռնտո՞ւ է Հայաստանին: Անշուշտ, ո՛չ: Եւ դրա պատճառները նոյնպէս ջրի երեսին են: Երկկողմի դէպքում բանակցային կարողութիւններով՝ Նիկոլը եւ իր դրածոները, աւա՛ղ, զիջում են ադրբեջանցիներին՝ լինելով նաեւ ջախջախուած իշխանութիւնների ներկայացուցիչներ: Բայց առաւել կարեւոր է միւս հանգամանքը. եռկողմ ձեւաչափի մէջ բացակայում են միջազգային երաշխիքները, որոնք գոնէ ֆորմալ առումով կարող էին զսպաշապիկ լինել Ադրբեջանի իրական ախորժակի համար:*

*5. Ռուսաստանը, որն անգամ սովորական պայմաններում մեծ սէր չի ունեցել բազմաշերտ եւ նուրբ դիւանագիտական գործելաոճի նկատմամբ, հիմա, շարունակւող ուկրաինական պատերազմի պարագայում, առաւել եւս «զահլա» չունի, եւ ուժեղացնելով սեփական դիրքերը Հարաւային Կովկասի այլ հատուածներում (Վրաստան, Աբխազիա, Հարաւային Օսեթիա, Ադրբեջան), ըստ ամենայնի, յոյսը դրել է ռեգիոնում հարցերը Թուրքիայի, ում ազդեցութեան տակ է ընկնելու Հայաստանն արեւմտեան վեկտորի շարունակման պարագայում, եւ Իրանի հետ Հարաւային Կովկասը «երեքի միջեւ», առանց դրսի ուժերի տնօրինելու վրայ:*

*Փաշինեանի գէոպոլիտիկ աւանտիւրիզմը ստանում է նաեւ զաւեշտալի բացատրութիւններ, ինչպէս, օրինակ, «ՀԱՊԿ չգնացի, որ չլեգիտիմացնեմ ադրբեջանական օկուպացիան» բանաձեւը: Գուցէ Հ1-ի կողմից ուղեղների լացման զոհ դարձող մի շերտի վրայ դա ազդեցութիւն ունի, բայց քիչ թէ շատ բանական շրջանակները, յատկապէս՝ դրսում, շատ լաւ հասկանում են, որ դա «փրփուր է»: Նախ, Փաշինեանը վերջին շրջանում բոյկոտել է ոչ միայն ՀԱՊԿ-ի, այլեւ ԵԱՏՄ եւ ԱՊՀ ձեւաչափերը, որոնք բացարձակ կապ չունեն անվտանգային հարցերի հետ:*

*Եւ, ամենակարեւորը, Փաշինեանը վաղուց լեգիտիմացրել է Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի դէմ՝ շարունակելով Ալիեւի բանակցութիւններն ադրբեջանական ագրեսիայի ամէն նոր ալիքից յետոյ՝ սկսած 2021 թ. մայիսից առ այսօր:*

*Ինչպէս տեսնում ենք, բոլորը, բացի մեզանից, մտածում են իրենց շահերի մասին: Իսկ մենք շարունակում ենք սիրել ականջներով, բայց այդպէս էլ պարզ չէ, թէ ինչով ենք մտածում:*

**ԱՐՄԷՆ ԱՇՈՏԵԱՆ**
**ՀՀԿ փոխնախագահի**
**«Նուբարաշէն» ՔԿՅ**
**17.11.2023 թ.**

# Վաստակաշատ տեսչուհի եւ կրթական մշակ Արմինէ Յովսէփեան-Վահրամեանը մեծարուեց Թաւրիզում
























***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ–*** *Նոյեմբերի 16-ի երեկոյեան ժամը 19:00-ին, Թաւրիզի առաջնորդարանի «Համազասպ Ոսկանեան» հանդիսասրահում կազմակերպուած յատուկ հանդիսութեամբ մեծարուեց, Թաւրիզի հայոց ազգ. «Հայկազեան-Թամարեան-Սահակեան» տարրական եւ միջնակարգ դպրոցների բազմավաստակ տեսչուհի եւ կրթական մշակ Արմինէ Յովսէփեան-Վահրամեանը, այս պաշտօնում հանգստի կոչւելու առիթով:*

*Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի նախագահութեամբ եւ Թեմական խորհրդի հովանաւորութեամբ, ու կազմակերպութեամբ սոյն խորհրդից նշանակուած յատուկ յանձնախմբի, շքեղ ձեռնարկը տեղի ունեցաւ առ ի գնահատանք բազմամեայ տեսչուհու, ներկայութեամբ բազմաթիւ հրաւիրեալների եւ համայնքի զաւակների: Յանձնախմբի անդամներն էին Անահիտ Յակոբեանը, Նայիրի Դիլանեանը, Նայիրի Շահմուրադեանը եւ Թեմական խորհրդից նշւած յանձնախմբի հետ կապը՝ Քաթրին Դիլանեանն էր:*

*Հոգեւորականաց դասի, Պատգամաւորական ժողովի եւ Թեմական իշխանութեան կողքին ներկայ Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը, թեմի միութիւնների եւ կազմակերպութիւնների վարչական ներկայացուցիչներ, Թեհրանի քոյր թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը, Թեհրանի «Ալիք» հաստատութեան ներկայացուցիչ Սեւան Դանիէլեանը, Թեմական խորհրդի փոխատենապետ Վահէ Թորոսեանը, մեծարեալի ընտանիքի անդամներ՝ ամուսինը՝ երաժիշտ Վարդան Վահրամեան, քոյրը՝ Նայիրի Յովսէփեան, հարսը՝ Քնար Յովսէփեան եւ համայնքի բազմաթիւ զաւակներ:*

*Իրանի քայլերգի ունկնդրութիւնից յետոյ, կազմակերպիչ յանձնախմբի անունից բարի գալստեան եւ ողջոյնի խօսք փոխանցեց Նայիրի Դիլանեանը: Նա սկսելով պաշտօնական հրաւիրեալներից, բոլորի ներկայութիւնը ողջունեց, ընդգծելով երեկոյի ընթացքը եւ բեմական ելոյթները:*

*Գեղարուեստական ծրագրով, ինչպէս նաեւ գնահատանքի խօսքերով յագեցած երեկոյի ընթացքում հանդիսավար Նայիրի Դիլանեանի հրաւէրով հերթաբար բեմ բարձրացաւ եւ ելոյթ ունեցաւ Թաւրիզի հայոց ազգային դպրոցի աշակերտութիւնը՝ երկու երգերով, ղեկավարութեամբ Թադէ Նազարբէգեանի: Ասմունքով ելոյթ ունեցաւ աշակերտուհի Սկաւղետ Ենովքեանը, իսկ աշակերտութեան անունից ուղերձ ընթերցեց Անգելինա Սարմասթեանը: Գեղարուեստական բաժնում իրենց մասնակցութիւնը բերեցին Վարդան Սարգսեանը, դոկտ. Արա Մելիքեանը, Ռեբեկա Սարգսեանը եւ Միրօ Աբրահամեանը, որոնց դաշնամուրի վրայ ընկերակցում էր Կարէն Սարգսեանը, իսկ Սեւանայ Դանղեանը՝ արտասանութեամբ մասնակցեց ծրագրին: Դարձեալ գեղարուեստական բաժնին մաս էր կազմում «Տաթեւ» պարային համոյթը, որը Թաւրիզի բեմը ծաղկեցրեց սքանչելի պարատեսակներով, ղեկավարութեամբ Կարինէ Մանուչեարեանի եւ փորձավարութեամբ Մարիա Գասպարեանի եւ Սեպուհ Անտոնեանի:*

*Արմինէ Յովսէփեան-Վահրամեանի անցած կեանքի եւ նւիրաբերման ուղու մասին կենսագրական տւեալները մանրամասնութեամբ ներկայացւեցին Նայիրի Դիլանեանի միջոցով, որը համեմւել էր բազմաթիւ խօսուն լուսանկարներով: Ներկաներից շատերը, որոնք համագործակիցներ էին եղել Արմինէ*

**(Շար. 6-րդ էջում)**



# «Իսկական դասականի ճակատագիր»

## Այվազեան-Վերդիեան. մեծից փոքր գրականութեամբ ու կինոյով ապրող արուեստագէտների ընտանիքը՝ «Նարեկացի»-ում

Տեղեկատուական հեղեղի մեր ժամանակներում թւում է՝ ամէն ինչ գիտենք, բայց ամէն օր յայտնաբերում ենք զարմանալի իրողութիւններ, որոնց մասին վաղուց պիտի իմանայինք: Ոչ միայն մեզ համար, վստահ ենք՝ արուեստի ու մշակոյթի ոլորտից շատերի համար նորութիւն կը լինի այն, որ միայն ճանաչուած արձակագիր, դրամատուրգ, հրապարակախօս, սցենարիստ Աղասի Այւազեան եւ Գրետա Վերդիեան ամուսինները չեն, որ իրենց նուիրել են արուեստին, գրականութեանն ու կինոյին, այլեւ նրանց զաւակները: Այսպէս. նրանց դուստրը՝ Կարինէ Վերդիեան-Կոսմոլը Մոսկւայի ՎԳԻԿ-ն աւարտելուց յետոյ սցենարական եւ կինոռեժիսորական լայն գործունէութիւն է ծաւալել Ռուսաստանում, Գերմանիայում, աւելի քիչ՝ նաեւ Հայաստանում, թողարկելով կինոպատմուածքների իր ժողովածուն: Իրենց մասնագիտական կրթութեամբ ու գործունէութեամբ ամբողջովին կինոարուեստին են նուիրել թոռները. Կարինէի զաւակները՝ կինոռեժիսոր Ֆելիքս Վերդիեանը, մեզ մօտ եւ Ռուսաստանում յայտնի ռեժիսոր, ՎԳԻԿ-ի շրջանաւարտ Նիկա Շէկը եւ ներկայումս Գերմանիայում ճանաչում ձեռք բերած կինոռեժիսոր-վաւերագրող, Եւրոպայում նոր ուղղութիւն որդեգրող շարժման՝ Կինոժուռնալիստիկան՝ որպէս վաւերագրական ֆիլմ-հայեցակարգի աւանգարդիստ ջատագովներից մէկը՝ Մարգարիտա Վերդիեան-Կոսմոլը, որը եւրոպական կինոփառատօների ակտիւ մասնակից է, հասցնում է որոշակի գործունէութիւն ծաւալել նաեւ Հայաստանում: Ինչ վերաբերում է Աղասի Այւազեանի գործունէութեանը, այդպէս էլ մեզանում ոչ ոք չկարողացաւ համախմբել բազմատաղանդ արուեստագէտի չափազանց բեղմնաւոր ու անհաւանական լայն գործունէութիւնը: Նոյնիսկ Այւազեանի գործունէութեան նուիրեալ Գրետա Վերդիեանը, ում երազանքըն էր ստեղծել «Այւազեանական կենտրոն», այդպէս էլ չկարողացաւ իրականացնել այն: Բաւական է միայն ասել, որ Աղասի Այւազեանն անդամակցում էր բոլոր մշակութային միութիւններին՝ գրողների, կինոգործիչների, նկարիչների, ժուռնալիստների եւ անգամ մարզական մի քանի կազմակերպութիւնների (աւարտել էր նաեւ ֆիզկուլտ ինստիտուտը):

Մտմտում էինք՝ անդրադառնալ Այւազեան-Վերդիեան ընտանիքին, երբ տեղեկացանք, որ «Նարեկացի» արուեստի միութեան դահլիճում նոյեմբերի 20-ին կը կայանայ երեկոյ՝ նուիրուած մշակութային այս ընտանիքի գործունէութեանը: Երեկոյի կազմակերպիչ, ռեժիսոր Լեւոն Իւանեանն էլ յայտնեց, թէ կայանալիք միջոցառմանը տեսաշարերով կը ներկայացուեն Աղասի Այւազեանի բազմաժանր գործունէութիւնը, Գրետա Վերդիեանի անսահման նուիրւածութիւնն արուեստին, կրթական գործին: Կը ներկայացուեն Կարինէ Վերդիեան-Կոսմոլի եւ Նիկա Շէկի, Ֆելիքս Վերդիեանի եւ Մարգարիտա Վերդիեան-Կոսմոլի ֆիլմերից հատուածներ:

«Մահկանացուն կնքելուց յետոյ առաջին անգամ կը բացւի Աղասի Այւազեանի նկարների անհատական ցուցահանդէսը եւ կը կայանայ Գրետա Վերդիեանի պիէսների եռահատոր ժողովածուի շնորհանդէսը,- յայտնեց Լեւոն Իւանեանը, յաւելելով,- իսկական դասականի ճակատագիր. այն, ինչ նրանք չկարողացան տեսնել կեանքի օրօք, մենք կը տեսնենք՝ իրենց յաւերժի ճանապարհը գնալուց յետոյ»:

**ՍԱՄՈՒԷԼ ԴԱՆԻԷԼԵԱՆ**
**«Առաւօտ» օրաթերթ**

# Արտաւազդ Փելեշեան

## Աշխարհահռչակ կինոռեժիսորը




Արտաւազդ Փելեշեանը աշխարհահռչակ կինոռեժիսոր է, Հայաստանի ժողովրդական արտիստ, ՌԴ արուեստի վաստակաւոր գործիչ, ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, բազմաթիւ միջազգային մրցանակների դափնեկիր:

Ապագայ կինոգործիչը ծնւել է Գիւմրիում 1938 թ.-ին: Սովորել է Կինեմատոգրաֆիայի համառուսաստանեան պետական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետում: Դեռ ուսանող ժամանակ Արտաւազդը մրցանակների է արժանացել այնպիսի աշխատանքների համար, ինչպիսիք են «Մարդկանց երկիրը» (1966 թ.) եւ «Սկիզբը» (1967 թ.):

Փելեշեանը դարձել է «Տարւայ եղանակները» ֆիլմի հեղինակը, որը նրա ամենայայտնի գործերից մէկն է: Ռեժիսորն աչքի է ընկնում գործի նկատմամբ նորարարական մօտեցմամբ:

Արտաւազդ Փելեշեանը նաեւ «Հեռահար մոնտաժի» տեսութեան հեղինակն է, որի առանձնայատկութիւնն այն է, որ Փելեշեանը չի սոսնձել կադրերը:

Արտաւազդը ստեղծագործել է «Բելառուսֆիլմ», «Հայֆիլմ», «Մոսֆիլմ» ստուդիաներում, Մ. Գորկու անուան կինոստուդիայում, ինչպէս նաեւ ֆրանսիական Fondation Cartie-ում եւ գերմանական ZTKM-ում:

Փելեշեանի մասին գրքեր են հրատարակւել Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Աւստրիայում, Չեխիայում, ԱՄՆ-ում, Բրազիլիայում, Գերմանիայում, Հարաւային Կորէայում, Չինաստանում եւ Ճապոնիայում:

Փելեշեանը նաեւ ԽՍՀՄ եւ Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միութեան անդամ է: Լիոնի Լիւմիեր եղբայրների թանգարանում նրա պատւին պատւոյ տախտակ է բացւել:

**Alphanews.am**

# 2024-ի փետրուարին Էրմիտաժում կը բացւի «Էրեբունի» թանգարանի անկիւնը

Նոյեմբերի 14-15-ը «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրէն Միքայէլ Բադալեանը Սանկտ Պետերբուրգում՝ Ռուսաստանի ազգագրութեան թանգարանում մասնակցել է «Թանգարան եւ դարաշրջան» միջազգային համաժողովին՝ ներկայացնելով «Էրեբունի թանգարանի համագործակցութիւնը պետական Էրմիտաժի եւ Պուշկինի անուան Կերպարւեստի պետական թանգարանի հետ» խորագրով զեկոյցը: «Էրեբունի» թանգարանից յայտնում են, որ այս կարեւոր համաժողովին Հայաստանից ներկայացուած են եղել նաեւ Հայաստանի պատմութեան թանգարանը, Հ. Շարամբէեանի անուան ռուսական արուեստի թանգարանը, ռուսական արուեստի թանգարանը եւ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան թանգարանը:



Սանկտ Պետերբուրգ իրականացրած այցի ժամանակ Միքայէլ Բադալեանին ընդունել է նաեւ պետական Էրմիտաժի տնօրէն Միխայիլ Պիոտրովսկին: Տեղի ունեցած հանդիպման ժամանակ Միքայէլ Բադալեանը Միխաիլ Պիոտրովսկուց շնորհակալութիւն է յայտնել Էրմիտաժի կողմից «Էրեբունի» թանգարանին ցուցաբերած աջակցութեան համար: 2024 թւականին Էրմիտաժի հնագէտները կը շարունակեն «Էրեբունի» թանգարանի մասնագէտների հետ աշխատել Կարմիր բլուրում, իսկ Էրմիտաժի մի քանի բարձրակարգ վերականգնողներ կրկին փորձի փոխանակում կունենան «Էրեբունի» թանգարանում:

Հանդիպման ընթացքում հաստատւել է, որ նախնականօրէն 2024 թւականի փետրւար ամսին աշխարհի ամենահեղինակաւոր մշակութային հաստատութիւններից մէկը հանդիսացող Էրմիտաժում կը բացւի «Էրեբունի» թանգարանի անկիւնը, որտեղ շուրջ մէկ տարի կը ներկայացուեն երեք հնագիտական առարկայ, Էրեբունի-Երեւանի 4 օրիգինալ ծննդեան վկայականներից մէկը, Երեւանի ուրարտական դամբարանից յայտնաբերւած մէկ աճիւնասափոր եւ Նոր Արմաւիրից գտնւած մէկ երկկանթ սափոր, որը ներկայացնելու է եւանդեան Հայաստանը: Էրեբունի անկիւնը յագեցած է լինելու նաեւ տեքստերով, ինչպէս նաեւ այժմ «Էրեբունի» թանգարանում կիրառւող եւ մեծ ճանաչում ստացած վիրտուալ եւ լրացուած իրականութեան փորձառութիւններով:

Յաջորդ տարի «Էրեբունի» թանգարանի նոր վերափոխւած ցուցադրութեան բացումից յետոյ արդէն բացւելու է Էրմիտաժի անկիւնն Էրեբունիում:

**Panorama.am**

# Հայ կինոյի 100-ամեակին նուիրուած կինոծրագիր Ամստերդամում՝ ի աջակցութիւն Արցախից բռնի տեղահանուած հայերի




«Ֆիլմադարան» ՀԿ-ի եւ նիդեռլանդցի կինոքննադատ Հիւգօ Էմերզաելի համագործակցութեան արդիւնքում իրականացւում է հայ կինոյի 100-ամեակին նուիրւած կինոծրագիր՝ ի աջակցութիւն Արցախից բռնի տեղահանւած հայերի:

Հայաստանի ազգային կինոկենտրոնից յայտնում են, որ ֆիլմերի ցուցադրութիւնները տեղի են ունենալու Ամստերդամի MACA (Moving Arts Center Amsterdam) մշակութային կենտրոնում նոյեմբերի 24-ին, 25-ին եւ 26-ին: Տոմսերի վաճառքից գոյացած ողջ հասոյթն ուղղւելու է բարեգործութեան՝ արցախահայերին աջակցելու համար:

«Պատկանելութեան կինօ. հայ ֆիլմարուեստի 100 տարին» (Cinema of Belonging: 100 Years of Armenian Film) ծրագրի շրջանակում հանդիսատեսին կը ներկայացւի 5 լիամետրաժ եւ 6 կարճամետրաժ կինոնկար: Նշւում է, որ ֆիլմերից որոշները տրամադրւել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից:

**Panorama.am**

# Իշխանափոխութիւն

ԹԱԹՈՒԼ ՕՀԱՆԵԱՆ



*Մեծ տարբերութիւն գոյութիւն ունի իշխանափոխութեան եւ յեղափոխութեան միջեւ, իշխանափոխութիւնը առհասակ տեղի է ունենում բռնատիրական երկրներում, որոնց իշխանաւորներն իրենց տիրապետութեան ընթացքին, աշխատում են ոչ թէ ի շահ հայրենիքի ու ժողովրդի՝ այլ ի վնաս նրա, երկրում համերաշխութեան մթնոլորտ ստեղծելու փոխարէն՝ երկպառակտութիւն, ժողովրդի եւ հայրենիքի շահերը պաշտպանելու փոխարէն պաշտպանում են թշնամիների շահերը եւ իշխանութիւնը ծառայեցնում են իրենց քմայքներին ու շահերին:*

*Յեղափոխութիւն նշանակում է վատից դէպի լաւագոյնի գնալու ընթացք, որի նպատակն է քաղաքական, հասարակական եւ տնտեսական արմատական փոփոխում, իշխող կարգերի տապալում եւ նոր յառաջադէմ կարգերի հաստատում:*

*Յանկացած երկրում իշխանափոխութիւնը կատարւում է հետեւեալ գործողութիւնների մոջոցով.*

*1-* ***Ժողովրդական*** *լայնածաւալ խաղաղ ցոյցերով, գործադուլներով եւ աննահանջ, անընդհատ եւ ոչ թէ ընդհատ պայքարով, ընդհուպ մինչեւ երթեւեկութեան խափանման եւ երկրի բնականոն ընթացքի կաթւածահարման եւ օդանաւակայանի շրջափակման, որին պիտի մասնակից լինեն երկրի բոլոր շերտերը (քաղաքական, հասարակական, համալսարանական, դպրոցական, բանւորական..., նոյնիսկ կրօնական եւ զինւորական անհատներ եւ կազմակերպութիւններ), քանզի այդ միասնական ծովածաւալ ժողովրդի դիմաց ապահովական ուժերը կընկրկեն եւ իշխանութիւնը եւս սարսափահար եւ գլուխը կորցրած հրաժարական կը ներկայացնի: Նման ժողովրդավար ձեւով իշխանափոխութիւնը նախ արիւնահեղութեան տեղիք չի տալիս, ապա արժեւորւում է թէ՛ միջազգային հանրութեան կողմից, եւ թէ՛ ազգային միասնականութիւն է ստեղծւում: Ժողովրդական այս շարժման համար խիստ անհրաժեշտ է ունենալ ժողովրդի կողմից սիրուած ու յարգուած առաջնորդ:*

*2-* ***Զինւորական*** *յեղաշրջմամբ տեղի ունեցած իշխանափոխութիւնը կատարւում է բանակի հրամանատարութեան եւ շարքային զինւորների կողմից բռնի կերպով եւ ոչ ժողովրդի լայն մասնակցութեամբ, որին հետեւում է զինւորական բռնապետութիւն, որն չի ընկալւում համաշխարհային համայնքի կողմից եւ դըժգոհութեան մեծ ալիք է առաջացնում ժողովրդի մօտ: Ժողովուրդը սրտբաց կերպով ընդունում է զինւորականների մասնակցութեամբ ժողովրդական ըմբոստ շարժումը, բայց չի հանդուրժում նոյն զիւորականների բռնապետութիւնը: Պատահում է նաեւ երբ ազատասէր եւ գաղափարական զինւորականներն են յեղաշրջում կատարում, որոնք կարճ ժամանակից յետոյ կազմակերպում են ընտրութիւններ եւ երկրի ղեկն յանձնում են ժողովրդի ընտրեալ իշխանաւորներին:*

*3-* ***Ժողովրդական զինեալ*** *պայքարով, որի գործադրման համար անհրաժեշտ է ունենալ հաւատարիմ զինավարժ մարտական խմբեր, համապատասխան քանակի եւ տեսակի զէնքեր եւ յստակ մարտավարական ճանապարհային քարտէզ: Սոյն գործողութեան զէնքերի մատակարարման եւ տեղափոխութեան համար, անհրաժեշտ է ունենալ բարեկամ երկրներից որեւէ մէկի հաւանութիւնը եւ համագործակցութիւնը: Այս գործողութիւնը ծախսատար լինելուց եւ խիստ պատասխանատըւութիւն կրելուց բացի, իր մէջ պարունակում է եղբայրասպանութիւն եւ արիւնահեղութիւն, որն ընկալելի չէ թէ՛ ազգային, եւ թէ՛ միջազգային հանրութեան կողմից:*

*4-* ***Օրինական*** *ընտրութիւններով իշխանափոխութիւն իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործելով արդիական բոլոր միջոցները, կազմել լայնածաւալ ժողովրդամատչելի քարոզչական ծրագիր, որն զանազան հաղորդակցման միջոցներով ցրելուց բացի, անհատ քարոզիչների միջոցով, թաղ առ թաղ, գիւղ առ գիւղ ժողովրդի մէջ մտնելով պէտք է համոզի նրանց, որպէսզի նախ մասնակցեն քուէարկութեանը եւ քուէարկեն ի շահ իրենց թեկնածուի կամ թեկնածուներին ու քուէարկութեան օրն էլ ըստ երկրի ընտրական օրէնսդրութեան, խախտումները կանխելու համար, խիստ հսկողութիւն իրականացնեն քուէարկութեան ընթացքի վրայ:*

**Նոր Ջուղա**
**18.11.2023 թ.**

# Դադիվանքում հայերէն պատարագը լսում էր միայն Սեւուկ անունով շունը. վանահայրը պատմում է եկեղեցու վերջին օրւայ մասին



*Դադիվանքում հայերէն պատարագը լսում էր միայն Սեւուկ անունով շունը. վանահայրը պատմում է եկեղեցու վերջին օրւայ մասին,- գրում է Sputnik Արմենիան:*

*Դերենիկ աբեղայ Սահակեանը յիշում է՝ մէկ տարի հայի երես չեն տեսել. Դադիվանքում պատարագներն ու ժամերգութիւններն անցնում էին առանց մարդկանց.*

*«Միայն Սեւուկ անունով շունն էր գալիս, նստում դռան առաջ. անգիր գիտէր պատարագի ժամերը»,- «Առանց տաբուների» հաղորդման ժամանակ պատմել է Դադիվանքի վանահայրը.*

*«Եկեղեցու դուռը երբեք չէր փակւում: Գալիս էր, այնքան նըստում դռան առջեւ, մինչեւ պատարագն աւարտւէր, յետոյ ուղեկցում էր կեցավայր: Ոչինչ չեմ մոռանայ»:*

*Հայր Դերենիկը յատկապէս չի մոռանայ Դադիվանքում անցկացրած վերջին օրը. «Դադիվանքը երբեք այդքան տխուր չեմ տեսել»:*

## Վաստակաշատ...

(Շար. 4-րդ էջից)

*Վահրամեանի անցած տարիների ընթացքում, յուշերով յետ գնացին պատմութեան մէջ, վերյիշելով անցեալը եւ ազգային-եկեղեցական ու կրթական կեանքի առօրեան Ատրպատականում:*

*Պաշտօնական խօսքերի եւ ուղերձների բաժնում հերթաբար ելոյթ ունեցան Թեմական խորհուրդը, որի խօսքը փոխացեց ատենապետ Գագիկ Ջորջեանը, Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը, Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը եւ Թաւրիզի հայոց ազգային դպրոցների տեսչուհի՝ Սիլւա Աշըղեանը:*

*Քոյր թեմերի առաջնորդներ՝ Սեպուհ արք. Սարգսեանից եւ Սիփան եպս. Քէչէճեանից, ազգային իշխանութիւններից, ազգային-հասարակական կազմակերպութիւններից, «Ալիք» հաստատութիւնից, ուրմիահայ բարերար Էդիկ եւ Սանդրա Մեջլումեանից եւ անհատներից, ինչպէս նաեւ Ատրպատականի թեմի բոլոր միութիւնների ու կազմակերպութիւնների անունից՝ (Թաւրիզ եւ Ուրմիա), գրուած շնորհաւորագրերը ընթերցւեցին Անահիտ Յակոբեանի միջոցով: Բոլորը իրենց երախտագիտութիւնն էին յայտնում սոյն ուղերձներով Արմինէ Վահրամեանին, ի դիմաց նրա նուիրեալ ծառայութիւնների եւ վեր էին հանել տիկին Վահրամեանի կառուցողական ներկայութիւնը համայնքային եւ կրթական կեանքում, լաւագոյն մաղթանքների յղմամբ:*

*Սրտագին խօսքերի եւ սիրալիր արտայայտութիւնների աւարտին, շնորհակալիքի խօսքով ելոյթ ունեցաւ օրւայ մեծարեալը: Արմինէ Վահրամեանը համայնքի զաւակների միախումբ ներկայութիւնից, ինչպէս նաեւ հիւրերի յարգալից մասնակցութիւնից ներշնչւած, իր սրտից բխած ամենաթանկագին բառերով շնորհակալութիւն յայտնեց բոլորին: Նա մէկ առ մէկ յիշելով բոլորին, ի պաշտօնէ, հրճւանքի իբրեւ արտայայտութիւն եւ երախտագիտութիւն եղած յարգանքին, նւէրներով պարգեւատրեց յատկապէս յանձնախմբի անդամներին եւ Թեմական խորհրդի ներկայացուցչին, ինչպէս նաեւ նկարների դասաւորումը իրականացրած Անդրու Մկրտչեանին:*

*Հանդիսութեան վերջում բեմ հրաւիրելով, Ատրպատականի առաջնորդը օրհնութեան խօսք փոխանցեց: Նա իր խօսքը սկսեց իւրաքանչիւր սփիւռքահայի ուղղւած կարեւոր հարցով. «Հայ Դպրոցը մեր բե՞ռն է, թէ՞ սէրը»: Սոյն հարցին պատասխանելով Սրբազան Հայրը թւեց այն հսկայական դժւարութիւնները, որոնք Սփիւռքի հայ համայնքները կրում են իրենց ուսերին, բաց պահելու համար Հայոց Դպրոցի դռները: Այս առումով, Սրբազան Հայրը շեշտեց այն կարեւոր պարտաւորութիւնը, որը մեր ժողովուրդն է դրել մեր ուսերին, որով Հայ Դպրոցը դառնում է ո՛չ թէ սովորական բեռ, այլ քաղցր ու սիրելի՝ բեռ մեր ուսերին դրւած: Նա ընդգծեց այն իրողութիւնը, որ Հայ Դպրոցը մեր ազգի համար նաեւ հայրենի հող է եղել Արեւմտահայաստանի կորստից յետոյ, երբ աւելի քան մէկ հարիւրամեակ ազգային ինքնութիւն էր ջամբել, շարունակում է իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում, օտար երկինքների տակ:*

*Սրբազան Հայրը թւեց այն բնագաւառները, որոնց մէջ իր տւած ժամանակով, իր բերած նպաստով, իր բնատուր ձիրքերով եւ բացայայտ նւիրումով գործել էր Արմինէ Վահրամեանը, եւ շարունակում է գործել. «Անհատներ կան, որոնց հանգստի կոչւել չի սազում: Տիկին Արմինէն նրանցից է: Կրթական կեանքից նա ստիպողաբար հեռանում է այսօր, հետեւելով կրթական նախարարութեան սահմանած ժամանակին: Հազար փառք Աստծոյ, որ մեր դպրոցը լաւ ձեռքերի է յանձնւած, երիտասարդական նոր շնչով եւ արդիական մեթոդներով շարունակելու սրբազան առաքելութիւնը Հայ Դպրոցի, մեր համայնքում»,- ասաց Սրբազան Հայրը, շեշտելով, որ վստահաբար տիկին Արմինէն մօտկից շարունակելու է հետեւել իր այնքան սիրած ու փայփայած լոյսի կրթարանի կեանքին ու առաքելութեանը:*

*Սրբազան Հայրը Յովսէփեան-Վահրամեան ընտանիքի ներկայութիւնը Թաւրիզում բարձր գնահատելով, ակնարկներ կատարեց դրանց անցած սերնդի ներկայացուցիչների եւ այժմեան անդամների միշտ դրական ներկայութեան, լինի ազգային ժողովական, թէ կրթական, համաշխարհային արւեստի եւ*





*ազգային մշակոյթի առմամբ:*

*Նա գոհունակութեամբ յայտնեց, որ անցած տարիներին ինքը անձնապէս դիմել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսին, որպէսզի Վեհափառ Հայրապետը տիկին Արմինէին պարգեւատրի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»-ի շքանըշանով, որպէս նւիրեալ անդամ հայ ազգի, եւ մշակութային կեանքում դերակատար անձնաւորութիւն Ատրպատականի հայոց թեմում: Նա հրաւիրեց Տ. Մարտիրոս քհնյ. Ղուկասեանին, որպէսզի ընթերցի Օրհնութեան Գիրը, որը հրապարակւել էր ազգային առաջնորդարանից: Սրբազան Հայրը իր գրութեան մէջ անդրադարձել էր աշխատանքային այն երկար ուղուն, որը հայ եկեղեցու ամենապատմական թեմում, ազգային եւ կրթական կեանքի տարածքում ունեցել էր Արմինէ Վահրամեանը:*

*Գնահատական եւ օրհնութեան իր խօսքի աւարտին, Սրբազան Հայրը յայտարարեց նաեւ տէր եւ տիկին Վարդան եւ Արմինէ Վահրամեանների կողմից կոկիկ գումարի նւիրաբերումը ազգային առաջնորդարանին, «Մելիք Թանգեան» թանգարանի գոյքերի դասաւորման ներկայ աշխատանքներին զօրավիգ կանգնելու նպատակով:*

*Բոլոր ներկաները ծափողջյններով մի անգամ եւս իրենց շնորհաւորանքը յայտնեցին Արմինէ Վահրամեանին, որից յետոյ բեմում նրան յանձնւեցին Թեմական խորհրդի եւ բոլոր միութիւնների եւ կազմակերպութիւնների կողմից մատուցւած յուշանւէրները:*

*Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ ընթրիք-հիւրասիրութիւն:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում Թ. Հ. Թ. բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանին, «ՀՈՒՍԿ» հասպապութեան եւ բոլոր միութիւններին, հասպապութիւններին, ընկերութիւններին, ազգական-բարեկամներին, ծանօթներին, ընկեր-ընկերուհիներին, ովքեր անձամբ, նամակով, բացիկով, հեռախօսով եւ մամուլի միջոցով վշտակցեցին մեզ, մեր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ԱՆԻ ՕՀԱՆԻ ԹՈՐՈՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԹՈՐՈՍԵԱՆ, ՕՀԱՆԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԲԱՐԽԱՆ ԵՒ ՋԱՂԱՐԲԷԳԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ**

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում Թ. Հ. Թ. բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանին, «ՀՈՒՍԿ» հասպապութեան եւ բոլոր միութիւններին, հասպապութիւններին, ընկերութիւններին, ազգական-բարեկամներին, ծանօթներին, ընկեր-ընկերուհիներին, ովքեր անձամբ, նամակով, բացիկով, հեռախօսով եւ մամուլի միջոցով վշտակցեցին մեզ, մեր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ԱՐԱՄ ՋԱՂԱՐԲԷԳԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ՋԱՂԱՐԲԷԳԵԱՆ ԵՒ ԹՈՐՈՍԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՎԱՀԻԿ ԲԱՅՐԱՄԶԱԴԷԻ**

ցաւալի մահուան քառասունօրեակի առթիւ՝ ուրբաթ, նոյեմբերի 24-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւններ՝ եկեղեցում եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Բայրամզադէ եւ Պետրոսեան ընտանիքներ՝ հարազատները:

**ԱԼԻՔ** Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԷՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ
Մի արհեստաւորի
(کارگر ساده)
09124855839

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում Օսիկ Նազարեանին, Հաթամզադէ եւ Նազարեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՆԱՐԲԷ ՀԱԹԱՄԶԱԴԷԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**Թ. Հ. Թ. ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում Լալա, Օսիկ եւ Սարօ Հաթամզադէներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՆԱՐԲԷ ՀԱԹԱՄԶԱԴԷԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԱՐՔՍԻ ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ՝ ԸՆՏԱՆԵՕՔ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Խոր վշտով համակուած ցաւակցութիւն ենք յայտնում Լալա եւ Մարկ, Օսիկ եւ Սարօ Հաթամզադէներին, Թամար Դիլանչեանին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՆԱՐԲԷ ՀԱԹԱՄԶԱԴԷԻ**

ցաւալի մահուան առիթով:

**«ՀԱՅ ԿԻՆ» ԵՒ ԿԻՑ «ԱՐՄԵՆՈՒՀԻ» ԵՒ «ԱՆԻ» ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Խոր վշտով համակուած ցաւակցութիւն ենք յայտնում Լիդուշ Դաւթեանին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՍԱՐԳԻՍ (ՍԱՔՕ) ԴԱՒԹԵԱՆԻ**

ցաւալի մահուան առիթով:

**«ՀԱՅ ԿԻՆ» ԵՒ ԿԻՑ «ԱՆԱՀԻՏ» ԵՒ «ԱՆԻ» ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ**









## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՀՐԱՉՈՒՀԻ ԱՄԻՐԽԱՆԵԱՆԻ (ՆԱՀԱՊԵՏԵԱՆ)**

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ կիրակի, նոյեմբերի 19-ին:

Թաղումը կը կապարուի չորեքշաբթի, նոյեմբերի 22-ին, ժամը 14:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 13:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Միրզայէ Շիրազի պող., 15-րդ փողոց, համար 27, 7-րդ միաւոր:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Արմենուհի Նահապետեան եւ Արամէ Ալեքսեան՝ դուստրը եւ թոռը:

Արա, Գիլդա եւ Էյջէյ Նահապետեաններ՝ որդին, հարսը եւ թոռը:

Վարուժ եւ Այլին Ամիրխանեաններ՝ եղբօր որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Արեգ եւ Քրիստին Ամիրխանեաններ՝ եղբօր որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Ասպետ եւ Քլօդետ Ամիրխանեաններ՝ եղբօր որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Վաչիկ եւ Ռիտա Ղարախանեաններ՝ քրոջ որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Վազրիկ եւ Ադիկ Ղարախանեաններ՝ քրոջ որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Մագի Քալանթար Օհանեան՝ հօրեղբօր դուստրը:

Մարիէտ եւ Յովիկ Նազլումեաններ՝ ամուսնու հարազատները:

Քնար եւ Նայիրի Նահապետեաններ՝ փազեր հարազատները:


املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

IRAN AIRTOUR AIRLINES | Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


## Բարձր է....

(Շար. 1-ին էջից)

*վրաերթի չենթարկլի»,- գրում են օգտատէրերը X-ում եւ յաւելում, որ այժմ դժւար չէ կռահել, թէ այս իրավիճակում առաջինն անցում կատարելու առաւելութիւնը ումն է լինելու:*

*Սոցցանցային սրամտութիւնների լուսանցքում օգտատէրերը նկատել են տալիս նաեւ Իսրայէլի եւ Իրանի վարած հիբրիդային հնարքների մասին: Թերեւս աննկատ չես անցնի այն գրառումներից, որոնք ակնարկում են Եմէնի «Անսարօլլահ»-ի գործողութեան եւ Բաքուն զինելու Իսրայէլի որոշման միջեւ եղած կապը: Յիշեցնենք, որ կիրակի կէսօրին Կարմիր ծովում Իսրայէլին վերագրուած նաւ է զաւթւել եւ տեղափոխւել հութիների հսկողութեան տակ գտնւող նաւահանգիստ:*

*Նոյն կապակցութեամբ Իսրայէլի վարչապետ Բենիամին Նեթանիահուի գրասենեակն այս միջադէպը (նաւը կանգնեցնելը) վերագրել է Իրանին: Նպատակը պարզ է, նման յայտարարութիւնների ստւերում՝ տարածաշրջանային եւ արտատարածաշրջանային հաւասարումներում Իրանին չզիջելու առիթներ ստեղծել իր համար:*

*Առաւել ուշագրաւ են զաւթւած նաւաբեռի մասին կատարւած հրապարակումները: Եմէնի բանակը նաւից բեռնաթափել է շուրջ 5 հազար էլեկտրական աւտոմեքենայ: Քանի որ այս նաւը պատկանում է սիոնիստներին, եւ եմէնցիները նոյնպէս պատերազմ են յայտարարել այս ռեժիմին, նրանք տասնեակ միլիոնների հասնող արժողութեամբ պատերազմական աւարը տեղափոխել են ափ, որպէսզի Եմէնի ժողովուրդը եւս անմասն չմնայ վարած պատերազմի արդիւնքներից:*

*Նոյն կապակցութեամբ Reuters-ը տեղեկացրել է, որ միեւնոյն սիոնիստ գործարարին պատկանող եւս երկու նաւ, որոնք նաւարկում էին Բահամեան կղզիների դրօշի ներքոյ, տեսնելով առաջինի ճակատագիրը, ուղղութիւնը շրջել են դէպի Կարմիր ծովի հիւսիս: «Պաղեստինի ժողովրդի ջարդին մասնակցելու համար կալանաւորւելու վախը սարսափեցրել է բոլորին»,- գրում են օգտատէրերը:*

*Irdiplomacy-ին նաւի զաւթման հետեւանքների մասին հրապարակած յօդւածում նշել է, որ Al-Mayadeen-ի աղբիւրները յայտնել են, որ նաւի սեփականատէրը Ռամի Օնգեր անունով իսրայէլցի գործարարն է: Մինչդեռ իսրայէլական բանակի խօսնակն ի պատասխան կիրակի կէսօրին Galaxy Leader նաւի զաւթման մասին լուրերին, հերքել է, որ նաւը իսրայէլական է եւ դիտարկել, որ հութիների կողմից բեռնակիր նաւի գրաւումը համաշխարհային մակարդակով վտանգաւոր նախադէպ է: Նա պնդել է, որ այս նաւը Թուրքիայից էր մեկնել Հնդկաստան՝ միջազգային քաղաքացիական անձնակազմով, եւ որ իսրայէլցիներ չկան նաւի վրայ, եւ այդ նաւն ընդհանրապէս Իսրայէլի հետ առնչութիւն չունի:*

### Պատերազմի հաւասարումները եմէնցիների մուտքից յետոյ

*Irdiplomacy-ին Աբդօլլռահիման Ֆաթօլլահի գրչին պատկանող յօդւածում յաւելել է, որ հաւասարումների առումով յստակ փոփոխութիւն է կրել իրավիճակը, յատկապէս, երբ Եմէնի «Անսարօլլահ»-ը լրջօրէն մտաւ ՀԱՄԱՍ-ի եւ Իսրայէլի միջեւ պատերազմի մէջ՝ գրաւելով նաւը Կարմիր ծովում: Թէեւ լրատւամիջոցներով իրարամերժ ու հակասող պատմութիւններ են ներկայացւող Galaxy Leader-ի սեփականատիրոջ վերաբերեալ, այնուամենայնիւ, այս հարցը չի նւազեցնում եմէնցիների գործողութիւնների կարեւորութիւնը: «Տարածաշրջանի հարցերով աւագ փորձագէտ Ասղար Զերաիի կարծիքով՝ «Անսարօլլահ»-ը ցոյց տւեց, որ Իսրայէլի վրայ ուղիղ հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերով յարձակմանը նախապատրաստւելուն մէկտեղ կը կարողանայ նոյնիսկ փոխել Բաբ ալ-Մանդեբ նեղուցի եւ Կարմիր ծովի հաւասարումները»,- մէջբերել է յօդւածագիրը:*

*Արտաքին քաղաքականութեան ոլորտի մեկնաբանը «Շարղ»-ի հետ զրոյցում յիշեցնում է նաեւ, որ «այժմ տարածաշրջանային խմբերի կշռման պայմաններում Եմէնի «Անսարօլլահ»-ը աւելի բարձր քաշային կարգերում է, քան սիրիական, իրաքեան եւ նոյնիսկ լիբանանեան «Հեզբօլլահ»-ը: «Թէեւ Լիբանանի «Հեզբօլլահ»-ը այժմ ուղիղ հակամարտութեան մէջ է Իսրայէլի հետ, սակայն երբեք նման քայլ չի արել, ինչ հութիներն արեցին՝ գրաւելով իսրայէլական նաւը»,- արձանագրել է թերթը:*

*Նասեր Թաղաւին մէկ այլ փորձագէտ է, ով «Շարղ»-ին տւած հարցազրոյցում ընդգծել է, որ այժմ կարեւոր չէ Իսրայէլի, Ճապոնիայի, կամ որեւէ այլ երկրի սեփականութիւնը յայտարարւած նաւի դրօշը, այլ գործողութեան ծաւալներն ու չափն է, որ կարեւոր է: Այս գործողութեան հետեւանքները կարող են որոշիչ դեր խաղալ տարածաշրջանային հաւասարումների առումով»: Թաղաւիի գնահատմամբ՝ Բաբ ալ-Մանդաբ նեղուցում եւ Կարմիր ծովում «Անսարօլլահ»-ի այսօրինակ գործողութիւնների կրկնութեան հնարաւորութիւնը մտնում է ուժի մէջ, քանի որ «Անսարօլլահ»-ը վերջին ամսւայ ընթացքում ցոյց է տւել, որ կարեւորութիւն չի տալիս զգուշացումներին ու իր գործողութիւնների հետեւանքների մասին սպառնալիքներին: «Այն ամերիկեան եւ իսրայէլական ուժերի վրայ ուղիղ հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի միջոցով գործողութիւն է իրականացնում: Մերձաւոր Արեւելքում աւելի մեծ լարում մտցնելու սցենարի հաւանականութիւնը բարձր է»:*


SET Coffee

فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه سِت


## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԺԵՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ (ՅՈՎԱԿԻՄԵԱՆ)**

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ երկուշաբթի, նոյեմբերի 20-ին:

Թաղումը կը կապարուի չորեքշաբթի, նոյեմբերի 22-ին, առ. ժամը 11:30-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 10:30-ին ներկայ գտնուել հեփեւեալ հասցէին՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Մաջիդիէ, Առաջին 16-մետրանոց պող., Էմամեան փողոցին կից:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Նորիկ եւ Սեւակ Յովակիմեաններ՝ ամուսինը եւ որդին:

Սիլւա, Արին եւ Երազ Շամիրեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռնուհին:

Յասմիկ եւ Սերոժ Կարապետեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Ռուբիկ եւ Թուլա Աբրահամեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Էդիկ եւ Արեւիկ Աբրահամեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Հայկ եւ Էմմա Յովակիմեաններ՝ փազրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Աբրահամեան, Յովակիմեան, Իսմայիլեան եւ Շամիրեան ընտանիքներ՝ հարազատները:


«Արարատ»

Ամէն փեսակ փնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

**Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16**

**Հեռ.՝88761154**

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ